

ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ա. Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Նյութական ռեսուրսների տնտեսումն ինքնանպատակ չէ. այն նախ և առաջ պետք է ուղղված լինի ժողովրդատնտեսական վերջնական արդյունքների ապահովմանը, այսինքն՝ խնայողությունը պետք է ուղեկցվի թողարկվող արտադրանքի սպառողական հատկությունների և որակի էական բարելավումով (կամ գոնե պահպանվի դրանց նախկին մակարդակը): Հակառակ դեպքում, նման տնտեսումը ժողովրդատնտեսական տեսանկյունից ձեռնտու չէ: Ընդհակառակը, հնարավոր է, որ ժողովրդական տնտեսությունը ձեռնտու լինի նյութական ռեսուրսների ոչ միայն խնայողությունը, այլև որոշ դեպքերում նաև ծախսի այնպիսի աճը, որը սպառողների մոտ ապահովում է՝ դրան գերազանցող էֆեկտ (այսինքն՝ նյութական ռեսուրսների լրացուցիչ ծախսերի համեմատ ավելի մեծ չափի խնայողություն): Հետևաբար, նյութական ռեսուրսների խնայողությանը չի կարելի միանշանակ մոտենալ: Խնայողության օբյեկտիվ գնահատումը պահանջում է, որպեսզի արտադրության տրվյալ գործընթացում նյութական ռեսուրսների խնայողությունը (կամ գերածախսը) համադրվի թողարկված արտադրանքի սպառողական հատկությունների և որակի հնարավոր փոփոխության հետևանքով արտադրության հետագա գործընթացներում արտադրական կամ անձնական սպառման ժամանակ առաջացած էֆեկտի փոփոխության հետ: Ընդհանրապես, ժողովրդատնտեսական տեսանկյունից նյութական ռեսուրսների խնայողությունը ձեռնտու է, եթե այն ձեռք է բերվում դրանց առավել արդյունավետ օգտագործման շնորհիվ, ապահովելով արդյունավետության բարձրացում ինչպես արտադրության տվյալ գործընթացում, այնպես էլ թողարկված արտադրանքի օգտագործման (կիրառման) ոլորտներում:

Տնտեսագիտական գրականության մեջ արտադրության արդյունավետությունն առավել սպառիչ բնութագրում են այն բնորոշումները, որոնք մատնանում են արդյունքի նպատակաուղղվածությունը և սոցիալատական արտադրության նպատակին համապատասխանող արդյունքի համադրումը վերջինս ապահովող կենդանի և առարկայացած աշխատանքի ծախսումների հետ¹: Այսինքն, հասարակական արտադրության արդյունավետությունը ենթադրում է հետևյալ երկու պայմանների առկայությունը. հասարակական արտադրության նպատակին հասնելը և այդ նպատակային արդյունքի համադրությունը համապատասխան ծախսերի հետ:

Այսպիսի մոտեցում կիրառելի է նաև նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրելու համար, միայն այն տարբերությամբ, որ աշխատանքի ընդհանուր ծախսերի փոխարեն պետք է օգտագործել նյութական ռեսուրսների մեծությունը:

Տնտեսագիտական գրականության մեջ և մեթոդական փաստաթղթերում որպես նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշներ հանձնարարվում են արտադրանքի նյութատարության ցուցանիշները²: Այսինքն՝ հասարակական արտադրության

¹ В. А. Медведев Управление социалистическим производством. Проблемы теории и практики, М., 1983, с. 244.

² И. Г. Пашко, Проблемы снижения материалоемкости, М., 1977, с. 12; Типовая методика разработки техпромфинплана производственных объединений и предприятий (комбинатов) М. 1979 с. 80; Методические указания к разработке государственных планов экономического и социального развития СССР, М., 1980, с. 48.

կազմակերպման և պլանավորման բոլոր մակարդակներում որպես նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշ հանձնարարվում է արտադրանքի նյութատարությունը: Սակայն այդ ցուցանիշն ամբողջությամբ չի կարող բնութագրել նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Նախ այն պատճառով, որ այդ ցուցանիշն արժեքային արտահայտությամբ բնութագրելով թողարկված արտադրանքի արժեքում նյութական ծախսերի բաժինը, ընդամենը կառուցվածքային ցուցանիշ է և չի կարող ամբողջովին ու միանշանակ բնութագրել նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, մանավանդ ներկայումս գործող դների համակարգի պայմաններում: Իսկ նյութատարության բնեղեն և բնեղեն-արժեքային ցուցանիշները, որոնք բնութագրում են արտադրանքի միավորի կամ դրա 1 ռուբլու վրա կատարված նյութական ծախսերի մեծությունը, ինքնին դեռևս քիչ բան կարող են ասել դրանց օգտագործման արդյունավետության մասին, քանի որ փոքր նյութատարություն, բայց ցածր սպառողական հատկություններ ու որակ ունեցող արտադրանքի արտադրությունը հավասարազոր է նյութական ռեսուրսների ուղղակի կորստի: Նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, եթե կատարված ծախսումների մեծության հետ հավասարապես հաշվի է առնվում նաև վերջնական արդյունքը: Այլ կերպ, արդյունավետ կարելի է համարել միավոր արտադրանքի արտադրության համար օգտագործված նյութական ռեսուրսների այն քանակությունը, որն արտադրության տեխնիկական և կազմակերպական տվյալ մակարդակում ապահովում է առավելագույն օգտակար էֆեկտ, միաժամանակ բավարարելով այդ արտադրանքի նկատմամբ սպառողների ներկայացրած պահանջները: Հետևաբար, նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը պետք է բնութագրի այնպիսի ցուցանիշ, որը համակողմանի հաշվի կառնի այդ պահանջները:

Թե մեկ, թե մյուս պայմանին արտադրանքի նյութատարության բերված ցուցանիշները չեն կարող բավարարել, մանավանդ որ դրանց հաշվարկման ընթացքում կոտորակի համարիչի (նյութական ծախսերի) ընդգրկման ոլորտից դուրս է մնում արտադրության գործընթացին մասնակցող նյութական ռեսուրսների այն մասը, որը գտնվում է գերնորմատիվային պաշարների, անավարտ արտադրության և գալիք ժամանակաշրջանի ծախսերի մնացորդներում: Իսկ հայտարարում արտացոլվող մեծությունը՝ ապրանքային (համախառն) արտադրանքը, սպառողների պահանջների բավարարման այս կամ այն աստիճանի և արտադրողների եկամուտների մասին ամեն ինչ էլ, որ կարող է ասել, քանի որ ռեալային սպառման մեջ է արդյունքը դառնում իրական արդյունք³: Ահա թե ինչու ձեռնարկությունների մակարդակում արտադրանքի նյութատարությունը չի կարելի համարել նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը գնահատող ընդհանրական ցուցանիշ:

Նյութական ռեսուրսների և, ընդհանրապես, արտադրության արդյունավետությունը կարող են բնութագրել միայն վերջնական արդյունքի ցուցանիշները: Որպես ձեռնարկությունների արտադրական գործունեության գնահատման վերջնական արդյունքի ցուցանիշներ տնտեսագիտական գրականության մեջ հանձնարարվում են զուտ արտադրանքը կամ տնտեսաշվարկային զուտ արտադրանքը⁴ (կամ էլ զուտ արտադրանքը՝ հանած ռեսուրսների դիմաց

³ К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 12, с. 717.

⁴ Р. А. Отсасон, Некоторые методические проблемы исследования и применения хозяйственного критерия эффективности производства, М., 1976, с. 11; А. В. Сягневич, Конечные результаты и показатели деятельности предприятий, М., 1986, с. 15 и др.

վճարը) և շահույթը⁵։ Ըստ որում, ճիշտ են այն տնտեսագետները⁶, որոնք որպես ձեռնարկության տնտեսական գործունեության վերջնական արդյունք հանձնարարում են ոչ թե արտադրանքի և ծառայությունների իրացումից ստացված հաշվեկշռային, այլ հաշվարկային կամ զուտ շահույթի մեծությունը։

Հետևապես, նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման գնահատման համար նույնպես առավել նպատակահարմար է որպես վերջնական արդյունք դիտարկել հաշվարկային շահույթի մեծությունը։ Սակայն ձեռնարկություններում փաստացի հաշվարկային շահույթի առկայությունը և դրա բացարձակ մեծությունը դեռևս քիչ է նյութական ռեսուրսների արդյունավետ օգտագործման աստիճանը բնութագրելու համար։ Վերջինի պատասխանը կարող է տալ հաշվարկային շահույթի և օգտագործված նյութական ռեսուրսների հարաբերության քանորդը։ Ըստ որում, հաշվարկային շահույթի հետ պետք է հարաբերել ոչ միայն ռեսուրսների այն ծավալը, որը ցույց կտա սպառված նյութական ռեսուրսների արդյունավետությունը, այլև արտադրության ծախսերի նախահաշվում արտացոլված նյութական այլ ծախսերի, ինչպես նաև նյութական ռեսուրսների պահեստային պաշարների մնացորդների տարբերության գումարը։ Այս վերջին հարաբերությունը ցույց կտա արտադրության գործընթաց ընդգրկված կամ ինչպես անվանում են՝ «կանխավճարված նյութական ռեսուրսների» օգտագործման արդյունավետությունը։ Արտադրության ծախսերի նախահաշվում, բացի ապրանքային արտադրանքի ինքնարժեքից, նյութական ծախսեր են պարունակվում անավարտ արտադրության մեջ, գալիք ժամանակաշրջանի ծախսերում, ինչպես նաև համախառն արտադրանքի մեջ շտկված աշխատանքներում։ Արտադրության ծախսերի նախահաշվում արտացոլված նյութական ծախսերի և նյութատեխնիկական ռեսուրսների պահեստային պաշարների տարվա վերջում և սկզբում մնացորդների տարբերության գումարը ձեռնարկության կողմից տվյալ ժամանակաշրջանում ձեռք բերված նյութական ռեսուրսների մեծությունն է։ Նյութական ռեսուրսների թվարկված բոլոր տեսակների վերաբերյալ ինֆորմացիան պարունակվում է համապատասխան հաշվետվություններում։

Այս ամենի հաշվառումով, նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրող ընդհանրական ցուցանիշները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. $U_n = \frac{C_n}{U_n}$, $U_n = \frac{C_n}{U_n}$, որտեղ U_n -ն ու U_n -ն օգտագործված նյութական ռեսուրսների և նյութական ծախսերի արդյունավետությունն է, C_n -ն հաշվարկային շահույթի մեծությունը, U_n -ն և U_n -ն համապատասխանորեն օգտագործված ռեսուրսներն ու ծախսերն են։

Նյութական ռեսուրսների օգտագործման վիճակը համակողմանի հետազոտելու և ամբողջականացնելու համար ընդհանրական ցուցանիշների հետ մեկտեղ անհրաժեշտ են մասնակի ցուցանիշներ, որոնց միջոցով հնարավոր լինի բնութագրել նյութական ռեսուրսների օգտագործման տարրեր կողմերը։ Այդպիսիք են՝ նյութահատույցի, արտադրանքի նյութատարության, արտադրանքի ինքնարժեքում նյութական ռեսուրսների ծախսի բաժնի, ինչպես նաև խնայողաբար, կոմպլեքս, լրիվ ու ռացիոնալ օգտագործման ցուցանիշները և այլն։

Նյութահատույցն ըստ ապրանքային արտադրանքի նույնպես պետք է հաշվարկել նյութական ծախսերի և ռեսուրսների համար առանձին-առանձին։ Արտադրության գործընթաց ընդգրկված նյութական ռեսուրսների ծա-

⁵ Г. В. Чернова Хозрасчетная и народнохозяйственная эффективность деятельности предприятий, М., 1986, с. 14 и др.

⁶ В. В. Новожилов, Проблемы измерения затрат и результатов при оптимальном планировании, М., 1967, с. 146; В. С. Немчинов, Общественная стоимость и плановая цена, М., 1971, с. 466—467; М. И. Ройзман, Народнохозяйственная и хозрасчетная эффективность производства, Кишинев, 1981, с. 92—93 и др.

վալի (Ն_ա) և դրանց ծախսերի (Ն_բ) համադրման միջոցով դժվար չէ պարզել: Թե այդ ռեսուրսների որ մասն է վերածվել ծախսի և համապատասխան գործակցի միջոցով կապ ստեղծել նյութական ռեսուրսների հատույցի (Ն_ա) ու նյութական ծախսերի հատույցի (Ն_բ) միջև:

Ի տարբերություն նյութատարության բնեղեն և բնեղեն-արժեքային ցուցանիշների, որոնք ցույց են տալիս նյութական ռեսուրսների ծավալի բացարձակ չափը և առավել ճիշտ են արտահայտում արտադրանքի նյութատարության մակարդակն ու դինամիկան, արժեքային ցուցանիշները բնութագրում են արտադրանքի արտադրության վրա կատարված ընդհանուր ծախսերի մեջ նյութական ռեսուրսների ծախսերի բաժինը և, հետևաբար, կառուցվածքային ցուցանիշներ են:

Կառուցվածքային է նաև արտադրանքի ինքնարժեքում նյութական ծախսերի բաժինն արտացոլող ցուցանիշը, որը նույնպես կարելի է համարել նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրող մասնակի ցուցանիշ:

Նյութական ռեսուրսների օգտագործման հետազոտման նպատակներից և խնդիրներից ելնելով, հաշվի առնելով նաև արդյունաբերության այս կամ այն ճյուղի առանձնահատկությունները գործնականում, անհրաժեշտություն է առաջանում օգտագործել միմյանց լրացնող ցուցանիշների համակարգ:

Ըստ որում, արտադրանքի միավորի համար կարևոր է տարբերել կոնստրուկտորական, տեխնոլոգիական, շահագործողական և բերված կամ ընդհանուր նյութատարության ցուցանիշները (կոնստրուկտորական նյութատարությունն արտադրանքի միավորին բաժին ընկնող նյութական ռեսուրսների մեծությունն է, տեխնոլոգիականը՝ միավոր արտադրանքի պատրաստման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների արժեքն է և կոնստրուկտորականին՝ գերազանցում է արտադրության գործընթացում առաջացած կորուստների և թափոնների չափով, շահագործողականը՝ թողարկված արտադրանքի ծառայության ժամկետում աշխատանքային վիճակում պահպանելու, շահագործելու վրա կատարված նյութական ռեսուրսների ծախսը հաշվառող ցուցանիշ է, իսկ բերված կամ ընդհանուր նյութատարությունը՝ միավոր արտադրանքի ինչպես արտադրության, այնպես էլ ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում շահագործման, նորոգման համար օգտագործված նյութական ռեսուրսների արժեքը հաշվառող ցուցանիշ է):

Այս ցուցանիշներից գործնականում առավել կիրառվող է կոնստրուկտիվ նյութատարությունը, ավելի քիչ՝ տեխնոլոգիական և շահագործողական նյութատարությունը, իսկ բերված նյութատարությունն ընդհանրապես դուրս է մնացել ինչպես տնտեսագետ հետազոտողների, այնպես էլ պլանավորող մարմինների, տնտեսագիտական տարբեր մակարդակների ծառայությունների ու շահագործողների: Մինչդեռ բերված նյութատարության կրճատումը նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացման հետ ուղիղ համեմատական կապի մեջ է, քանի որ այն առավել լրիվ է արտահայտում ժողովրդատնտեսական վերջնական արդյունքը:

Նյութական ռեսուրսների օգտագործումը բնութագրելիս, բացի արդյունավետից, տնտեսագիտական գրականության մեջ օգտագործվում են նաև կոմպլեքս⁷, ռացիոնալ, լրիվ, խնայողաբար հասկացությունները: Դրանց առատությունը պայմանավորված է նյութական ռեսուրսների սպառողական հատկությունների բազմազանությամբ և արտադրության գործընթացում իրերի տարբեր կողմերի, հատկությունների ունեցած դերով: Նյութական ռեսուրս-

7 Տնտեսագիտական գրականության մեջ առավել ուսումնասիրված են նյութական ռեսուրսների կոմպլեքս օգտագործման հարցերը, որոնք վերաբերում են ռեսուրսների արդյունահանման ու վերամշակման փուլերին: Այս, ինչպես և այն պատճառով, որ ուսումնասիրության օբյեկտը սահմանափակվում է միայն վերամշակող ճյուղում, նյութական ռեսուրսների կոմպլեքս օգտագործմանը չենք անդրադառնում:

ների մի մասն առարկայանում է թողարկվող արտադրանքի մեջ, մյուսը՝ գտնվում է արտադրական պաշարներում, որոշ մասն էլ արտադրության կազմակերպման և տեխնոլոգիաների անկատարության հետևանքով կորչում կամ վերածվում է թափոնների: Սակայն նյութական ռեսուրսների օգտագործումը բնութագրող այդ հասկացությունների մեջ միշտ չէ, որ հատուկ սահմանափակում է մտցվում, որի պատճառով հաճախ հնարավոր չէ միանշանակ մոտենալ ռացիոնալ կամ արդյունավետ, լրիվ կամ կոմպլեքս, ռացիոնալ կամ կոմպլեքս, ռացիոնալ կամ խնայողաբար օգտագործմանը և այլն: Մինչդեռ այդ հասկացություններից յուրաքանչյուրը բնութագրում է նյութական ռեսուրսների օգտագործման որոշակի կողմ, ուստի և պետք է արտահայտել համապատասխան ցուցանիշի միջոցով:

Ռացիոնալ նշանակում է խելամիտ, նպատակահարմար, հիմնավորված: Ռացիոնալ օգտագործման տակ, իր հերթին, պետք է հասկանալ գիտակցված, հասարակականորեն անհրաժեշտ սպառում: Հետևաբար, նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը գործընթացի որակական բնութագիրն է, որը հասարակական արտադրության զարգացման հետ կապված անընդհատ կարող է փոփոխվել: Այդպես է, քանի որ «իրերի տարբեր կողմերը և, հետևաբար, գործադրման բազմապիսի եղանակները երևան հանելը պատմական զարգացման գործն է»⁸: Միևնույն իրը տարբեր օգտակար հատկությունների դեպքում ապահովում է տարբեր սպառողական էֆեկտ: Այդ իսկ պատճառով ռացիոնալ պետք է համարել նյութական ռեսուրսի այն հատկության օգտագործումը, որը գիտության և տեխնիկայի զարգացման տվյալ մակարդակում ժողովրդական տնտեսության համար ապահովում է առավելագույն էֆեկտ: Նյութական ռեսուրսներն արտադրության գործընթացը ընդգրկելիս միշտ չէ, որ հնարավոր է լինում դրանց առավելագույն էֆեկտ ապահովող հատկությունն օգտագործել: Նման դեպքերում նյութական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման աստիճանը հնարավոր է որոշել առավելագույն էֆեկտ ապահովող ուղղությամբ օգտագործված ռեսուրսի ծավալը հարաբերելով տվյալ նյութական ռեսուրսների ընդհանուր զանգվածին. $\Gamma_{\text{նո}} = \frac{Ա_0}{\Phi_0}$, որտեղ $\Gamma_{\text{նո}}$ -ն նյութական ռեսուրսի ռացիոնալ օգտագործման գործակիցն է, $Ա_0$ -ն առավելագույն էֆեկտ ապահովող ուղղությամբ օգտագործված ռեսուրսի ծավալն է, Φ_0 -ն փաստացի օգտագործված ռեսուրսների ընդհանուր զանգվածն է:

Նյութական ռեսուրսների տնտեսման կարևոր ուղին դրանց խնայողաբար օգտագործումն է: Եթե ծախսի համապատասխան նորմաներով նյութական ռեսուրսների որոշված ծավալը հարաբերենք դրանց փաստացի ծախսին, ապա ստացված արդյունքը ցույց կտա նյութական ռեսուրսների խնայողական օգտագործման աստիճանը՝ $\Gamma_{\text{բ}} = \frac{Ն_{\text{բ}}}{\Phi_{\text{բ}}}$, որտեղ $\Gamma_{\text{բ}}$ -ն նյութական ռեսուրսների խնայողաբար օգտագործման գործակիցն է, $Ն_{\text{բ}}$ -համապատասխան նորմաներով որոշված նյութական ռեսուրսների ծախսի նախատեսվող ծավալն է, $\Phi_{\text{բ}}$ -ն նյութական ռեսուրսների փաստացի ծախսն է:

Նյութական ռեսուրսների տնտեսումը մեծապես պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ինչ չափով են դրանք օգտագործվում: Եթե փաստացի օգտագործված նյութական ռեսուրսների ծավալը արտադրանքի արտադրության վրա կատարված նյութական ծախսերի մեծությունը և տվյալ ժամանակամիջոցում այդ նպատակի համար ձեռնարկության տրամադրության տակ եղած նյութական ռեսուրսների մեծությունը համապատասխանում են միմյանց, ապա կարելի է ասել, որ դրանք օգտագործվել են լրիվ: Այդ երկու մեծությունների հարաբերությունն էլ ցույց կտա նյութական ռեսուրսների օգտագործման լրիվության աստիճանը: $\Gamma_{\text{լ}} = \frac{Ն_0}{Ա_0}$, որտեղ $\Gamma_{\text{լ}}$ -ն նյութական ռեսուրսների լրիվ օգտագործման գործակիցն է, $Ն_0$ -արտադրանքի արտադրության համար կատարված նյութական ծախսերն են, $Ա_0$ -տվյալ ժամանակաշրջանում կանխավճարված նյութական ռեսուրսներն են:

8 Կ. Մ արքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 41:

Այսպիսով, որպեսզի նյութական ռեսուրսների օգտագործման գնահատումը կատարվի համակողմանիորեն և ճիշտ արտացոլի դրանց սպառման առանձնահատկություններն արտադրական գործընթացում, անհրաժեշտ է ցուցանիշների համակարգ: Այն կարող է դառնալ նյութական ռեսուրսների օգտագործման կառավարման մեխանիզմի անհրաժեշտ տարրերից մեկը, որը հնարավորություն կընձեռի բացահայտել ինչպես դրանց օգտագործման փաստացի վիճակը, այնպես էլ արդյունավետության բարձրացման առկա նեղերվները:

ОЦЕНКА ИСПОЛЬЗОВАНИЯ МАТЕРИАЛЬНЫХ РЕСУРСОВ

А. В. ДАРБИНЯН

Резюме

Экономия материальных ресурсов является важнейшим требованием интенсификации производства. С народнохозяйственной позиции выгодна экономия, обеспечивающая повышение эффективности использования материальных ресурсов в совокупности на стадиях создания и потребления продукции. Однако показатели оценки использования материальных ресурсов, рекомендуемые в экономической литературе и применяемые в практике планирования, полностью не отвечают этому требованию.

Уровень совершенствования механизма управления использованием материальных ресурсов во многом обусловлен системой показателей, характеризующей их эффективное применение. В ней обобщающими показателями эффективности использования материальных ресурсов являются отношения чистой прибыли ко всем материальным ресурсам, вовлеченным в процесс производства, а также ее величины к материальным затратам.